

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԼԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱԹԵԼԼԱ ՍԵՐՈԺԻ

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Սիմոնյան Ա. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Հակոբյան Ա. Ս.

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Հարությունյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն

Վանաձորի պետական մանկավարժական  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. սեպտեմբերի 23-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հուլիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ

Սուրադյան Հ.Ղ.

## **ԱՏԵՆԱՒՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** 20-րդ դարի հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից է 1921 թ. փետրվարյան ապստամբությունը, որի վերաբերյալ թեև ստեղծվել է քաղաքական, հրապարակախոսական ու գիտական հարուստ գրականություն, բայց չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ չկա այս ապստամբությանն առնչվող գեթ մեկ հարց, որն արժանացած լինի միանման ու սպառիչ գնահատականի: Եվ դա միանգամայն հասկանալի է, որովհետև այն, լինելով երկու թշնամական կուսակցությունների հակընդդեմ գործունեության ծնունդ, բնականաբար այդ կուսակցությունների կերպայացուցիչների կամ համախոհների կողմից ընկալվել ու մեկնաբանվել է հակադիր տեսանկյուններից: Այլ խոսքով ասած՝ գենքի հակադրությունը վերածվել է գրչի հակադրության, և իրական մենամարտը փոխարինվել է գաղափարական-պատմագիտական մենամարտով: Ընդ որում՝ բարիկադների տարբեր կողմերում գտնվող ուժերը, իրարից բաժանված լինելով տարածությամբ (ՅՅԳ-ն գտնվում էր վտարանդիության մեջ, իսկ Կոմկուսը բացարձակ մենատեր էր երկրի ներսում), նրանց գաղափարական փոխհրաձգությունը նմանվել է դատարկ կրակոցի. ոչ մեկը չի փորձել լսել մյուսի ասածը և ըստ այդմ՝ դյուզն-ինչ փոխել իր տեսակետը կամ փորձել գտնել փոխգիշտումային տարբերակ: Այժմ, երբ չկա Կոմկուսի գաղափարական մենիշխանությունը, իսկ ՅՅԳ-ն ազատորեն գործում է նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, ժամանակն է վերանայելու հայ պատմագրության մեջ առկա իրարամերժ տեսակետները և այդ ամենի քննական վերլուծության ճանապարհով ձևավորելու պատմագիտական ճիշտ պատկերացում մեր ժողովրդի պատմության այդ էջի մասին: Դրա լավագույն ճանապարհն առկա տեսակետների անաչառ ներկայացումն ու քննական վերլուծությունն է, որը կփորձենք իրականացնել մեր առենախոսության շրջանակներում:

Այսօր խիստ կարևոր է այդ իրադարձություններին առնչվող պատմական փաստերի, դեպքերի ու դեմքերի անկողմնակալ վերլուծությունն ու գիտական գնահատականը, քանի որ այն ոչ միայն պատմագիտական, այլև գործնական-քաղաքագիտական հույժ կարևոր խնդիր է: Հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի արդիական և քաղաքական հեռանկարի իմաստով դասեր քաղելու, նրա սխալների վրա հետևություններ անելու նշանակություն:

**ԱՏԵՆԱՒՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Առենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, մամուլի, հուշագրությունների և պատմագիտական գրականության հիման վրա անկողմնակալ դիրքերից լուսաբանել ու քննական վերլուծության ճանապարհով ձևավորել ճիշտ պատկերացում մեր ժողովրդի պատմության այս էջի մասին: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- բացահայտել փետրվարյան ապստամբության պատճառներն ու նախադրյալները,
- լուսաբանել փետրվարյան ապստամբության ողջ ընթացքը,
- բացահայտել ապստամբության պարտության պատճառները,
- պարզաբանել ու ներկայացնել նրա ունեցած դերը, նշանակությունն ու հետևանքները հայ հասարական-քաղաքական հետագա կյանքի վրա:

**ԱՏԵՆԱՒՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Առենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմական սկզբունքների, աղբյուրագիտական նյութերի, փաստաթղթերի մանրակրկիտ հետազոտության, պատճառահետևանքային կապերի բացահայտման, պատմահամեմատական և պատմաքննական մեթոդաբանությամբ:

Չերծ ենք եղել կուսակցական կանխակալ մոտեցումից ու նախասիրություններից: Եզրահանգումները կատարվել են միայն փաստական նյութի հիման վրա, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

**ԱՏԵՆԱՆՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1920 թ. աշնանից մինչև 1921 թ. ապրիլը, այն է՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մինչև ապստամբության պարտությունը ընդգրկած ժամանակահատվածը:

**ԱՏԵՆԱՆՈՒՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Փետրվարյան ապստամբության մասին թեև շատ են գրել ու շատերն են գրել, սակայն մինչ օրս չկա փետրվարյան ապստամբության մասին ավարտուն և ամբողջական որևէ աշխատություն, որը իր մեջ ներառեր հիմնախնդրի բոլոր կողմերը: Այս առումով մեր ատենախոսությունը, որը հիմնված է արխիվային նյութերի և վավերագրերի, իրարամերժ տեսակետների քննական վերլուծության վրա, առաջին համեստ փորձն է:

Ատենախոսության մեջ հնարավորինս ամբողջական կերպով ներկայացված են հիմնախնդրին առնչվող բոլոր հարցերը և տրված են սպառնիչ պատասխաններ: Ուսումնասիրության մեջ կատարված եզրահանգումները, ինչպես նաև բերված փաստաթղթերը կարող են օգտագործվել հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի վերաբերյալ գրվելիք դասագրքերում և աշխատություններում:

**ԱՏԵՆԱՆՈՒՄՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել ու հրատարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից:

**ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** Փետրվարյան ապստամբության ամբողջական ու համակողմանի պատմության ուսումնասիրության ու ներկայացման համար նախ և առաջ օգտագործել ենք Հայաստանի Հանրապետության ազգային արխիվում պահվող փաստաթղթերը: Մասնավորապես օգտագործել ենք Ազգային արխիվի թիվ 37, 112, 113, 114, 116, 147, 199, 200, 201, 1021, 1022, 1253, 1435, 1438, 1440, և 1445 ֆոնդերի նյութերը:

Թեմայի ուսումնասիրության համար բացի անտիպ փաստաթղթերից, մեր կողմից օգտագործվել են խորհրդային և հետխորհրդային շրջանում հրատարակված սկզբնաղբյուրներ՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ<sup>1</sup>, պարբերական մամուլ<sup>2</sup>, բազմաթիվ մենագրություններ:

Խնդրո առարկա պատմական իրադարձությունը լուսաբանելու տեսակետից շատ կարևոր են խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի պետական ու կուսակցական գործիչներ, այդ իրադարձությունների անմիջական մասնակիցներ ու գլխավոր դերակատարներ Գեորգի Չիչերինի, Սերգո Օրջոնիկիձեի, Սերգեյ Կիրովի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Սարգիս Կասյանի, Աքսանազ Մռավյանի, Սահակ Տեր-

<sup>1</sup> Տես խորհրդային Հայաստանի հինգ տարին (1920-1925), Եր., 1926: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, ՅՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1960: Բ. Լեզրանի միսիան (փաստաթղթեր), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1967, թիվ 3, էջ 21-104: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, «Հայաստան», Եր., 1972: 11-րդ Կարմիր բանակի մարտական ուղին Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ամրապնդման ժամանակաշրջանում 1920 թ. մայիս-1921 թ. նոյեմբեր, փաստաթղթերի ժողովածու, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1978, թիվ 1, էջ 106-124: ՀՀ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, խմբագրմամբ Վ. Ղազախեցյանի, Եր., 1999: Генерал армян ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Состовитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. т. 1, М., 2002, т. 2, ч.1, М., 2003, т. 2, ч 2, М., 2005.

<sup>2</sup> «Ազատ Հայաստան», «Դրոշակ», «Կոմունիստ», «Հառաջ», «Հայրենիք»:

Գաբրիելյանի և Ալեքսանդր Բեկզադյանի հրամանները, հեռագրերը, ճառերը, մասնակները, զեկույցները, տարաբնույթ հոդվածներն ու ելույթները, որոնք հրատարակվել են նրանց երկերի ժողովածուներում<sup>3</sup>: Դրանցում հեղինակները դեպքերի անմիջական տպավորությամբ փորձում են վերլուծել տեղի ունեցածը, բացահայտել հիմնական պատճառները՝ հարկավ դրսևորելով ակնհայտ կողմնակալ և սուբյեկտիվ վերաբերմունք: Սակայն, անկախ հեղինակների դրսևորած միակողմանի վերաբերմունքից, դրանք պարունակում են փաստական հարուստ տեղեկություններ ու առանձին մանրամասներ, որոնք կարող են գիտական անաչառ ուսումնասիրության ու զնահատության: Սկզբնաղբյուրի արժեք ունեն մաս ապաստամբությունից անմիջապես հետո այդ դեպքերը կոմունիստական դիրքերից վերլուծելու և զնահատելու առանձին գիտնականների փորձերը, որոնք նույնպես աչքի են ընկնում կողմնակալությամբ ու սուբյեկտիվությամբ: Ներկա դեպքում նկատի ունենք Ա. Կարինյանի և Ա. Հովհաննիսյանի՝ 1920-ական թվականներին գրած աշխատությունները<sup>4</sup>:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր արժեք ունեն մաս Հայաստանի առաջին հանրապետության պետական այն գործիչների թողած հուշերն ու հրապարակած աշխատությունները, ովքեր, հանգամանքների բերումով գտնվելով դեպքերի հորձանուտում, մասնակցել են այդ ապստամբությանը, անմիջականորեն ակնամատես եղել իրադարձությունների զարգացման ընթացքին<sup>5</sup>: Ինչպես և սպասելի էր, վերջիններս և աչքի են ընկնում կողմնապահությամբ, միայն այն տարբերությամբ, որ երևույթները ընկալում ու ներկայացնում են բարիկադների հակառակ կողմում մարտնչողների տեսանկյունից: Դրանք բոլորը, լինելով շատ կարևոր, բնականաբար, տարբերվում են իրենց արժանիքներով ու նշանակությամբ: Ըստ այդմ, հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի աշխատություններին, մասնավորապես՝ «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրթրական սալի մեջ» աշխատությանը՝ նվիրված 1918-1921 թթ. Հայաստանի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրության լուսաբանմանը, 1921 թ. փետրվարյան ապստամբության նկարագրությանը: Փորձելով բացահայտել վերջինիս ծագման պատճառները՝ հեղինակը հիմնականում մեղադրում է Հայիեղկոմին, որը, նրա կարծիքով, իր ներքին և արտաքին քաղաքականությամբ կարճաժամ ժամանակահատվածում այնպես հիասթափեցրեց ժողովրդին, որ խորհրդային կարգերի հաստատումից դեռ երեք ամիս չանցած՝ լցվեց ժողովրդի համբերության բաժակը, և նա ստիպված եղավ զենք բարձրացնելու սեփական

<sup>3</sup> Բեկզադյան Ա., Նամակներ, Հոդվածներ, Փաստաթղթեր, «Հայաստան», Եր., 1981: Տեր-Գաբրիելյան Ս., Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, «Հայաստան», Եր., 1979: Օրջոնիկիձե Գ., Ընտիր հոդվածներ ու ճառեր, Հայպետհրատ, Եր., 1950: Մյասնիկյան Ա., Ընտիր երկեր, Հայպետհրատ, Եր., 1957: Կասյան Ս., Ընտիր երկեր, «Հայաստան», Եր., 1974: Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր: 1913-1929, Հայպետհրատ, Եր., 1961: Купос С., Избранные статьи и речи (1912-1934), Госполитиздат, М., 1957: Чусерун Г., Статьи и речи по вопросу международной политики, Сопэкрус, М., 1961.

<sup>4</sup> Կարինյան Ա., Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը (փաստեր, դոկումենտներ), Տրեստի առաջին տպ., Եր., 1924, նույնի՝ Քաղաքացիական պատերազմը Հայաստանում և նրա դրդապատճառները, Տրեստի առաջին տպ., Եր., 1922: Հովհաննիսյան Ա., Դաշնակցությունը և պատերազմը, Տրեստի առաջին տպ., Եր., 1924: Նույնի՝ Համազգային կրիզիսը (նոյեմբերյան հեղափոխության 5-րդ տարեդարձի առթիվ), Պետհրատ, Եր., 1926:

<sup>5</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, Պեյրութ, 1970: Քաջագունի Հովհ., ՀՀԴաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994: Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930: Իրագել, Մոսկվ անցյալից, պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922, Պեյրութ, 1956: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993: Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրթրական սալի մեջ, Եր., 1993, Վրացեան Ա., Կեսանքի ուղիներով, դեպքեր, դեմքեր, ապրումներ, Կ. Ա և Զ, Գահիրե, 1955 և Պեյրութ, 1967:

իշխանության դեմ: Փաստորեն, Ս. Վրացյանի կարծիքով, փետրվարյան ապստամբությունը կրել է տարերային բնույթ և ծագել է որպես բոլշևիկների վարած հակաժողովրդական քաղաքականության օբյեկտիվ հետևանք՝ առանց նախապատրաստության ու արտաքին օգնության: Նա ծիծաղելի է համարում բոլշևիկների այն պնդումը, որ իբր փետրվարյան ապստամբությունը նախապատրաստվել էր դաշնակցության կողմից: Իր այդ տեսակետը հիմնավորելու համար բերում է այն փաստը, որ ամիսներ առաջ իշխանությունը կամավոր ձևով բոլշևիկներին հանձնած դաշնակցությունը ստեղծված իրավիճակում չէր կարող հետապնդել իշխանությունը վերանվաճելու նպատակ, քանզի հակառակ դեպքում թույլ չէր տա, որ իր գործող ուժերը վաղօրոք հեռանան կամ հեռացվեն Չայաստանից:

Մեզ հետաքրքրող իրադարձությունների լուսաբանման տեսակետից կարևոր են նաև նույն հեղինակի «Կեանքի ուղիներով. դէպքեր, դեմքեր, ապրումներ» բազմահատոր հուշագրության Ա և Ձ հատորները, որոնցում նա հանգամանորեն ներկայացրել է Չայաստանում ծավալված քաղաքացիական կռիվները՝ հետաքրքիր մանրամասներ հայտնելով ընդհանրապես զանգեզուրյան իրադարձությունների և մասնավորապես մարտական գործողությունների վերաբերյալ:

Փետրվարյան ապստամբության պատմության լուսաբանման համար կարևոր սկզբնաղբյուր է Իրազեկի (Չակոբ Տեր-Չակոբյան) «Մոտիկ անցեալից. պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922» հուշագրությունը, որտեղ զգալի տեղ է տրված ապստամբությանը նախորդող և հաջորդող իրադարձություններին:

Իր հուշերում փետրվարյան ապստամբությանը նախորդած իրադարձություններին անդրադառնում է նաև Ա. Ստեփանյանը, որակելով այն որպես «համաժողովրդական ապստամբություն», Ս. Վրացյանի նման համարում է ժողովրդական լայն զանգվածների հիասթափության ու ծայրահեղ դժգոհության արդյունք<sup>6</sup>:

Խնդրո առարկայի տեսակետից արժեքավոր են նաև Չայաստանի առաջին հանրապետության ֆինանսների նախարար Գ. Ջաղեթյանի հուշերը<sup>7</sup>: Չուլազիլը «Դաշնակցական շեֆերի հաշվետվությունը» հոդվածում անողոր քննադատության են ենթարկում ապստամբության ղեկավարների կողմից Չայաստանից արտահանած տարադրամային և այլ արժեքների ծախսման հաշվետվությունը կազմողներին (Ս. Վրացյանին, Գ. Տեր-Մինասյանին, Յ. Տերտերյանին, Ա. Չովհաննիսյանին և Ա. Խոնդկարյանին) ու մատնանշում, որ նրանց կազմած հաշվետվությունը չի համապատասխանում իրականությանը:

Փետրվարյան ապստամբության պատմության մասին հույժ արժեքավոր փաստեր են պարունակում «Չայրենիք» ամսագրի տարբեր տարիների ավելի քան քառասուն համարներում ապստամբության մասնակիցների կամ նրանց անունից հրատարակված հուշերն ու հոդվածները, ինչպես նաև «Վէմ», «Դրոշակ» և այլ հանդեսներում ու թերթերում («Ազատ Չայաստան», «Խորհրդային Չայաստան», «Կոմունիստ», «Չայաստանի կոմունիստ» և այլն) լույս տեսած բազմազան նյութերը:

Դաշնակցական գործիչներից փետրվարյան ապստամբությանը տարբեր առիթներով մասամբ անդրադարձել է նաև Վ. Նավասարդյանը՝ իր «ՅՅԴաշնակցութեան անելիքը, մտքեր և յուշեր» աշխատության մեջ<sup>8</sup>: Այստեղ հեղինակը հակադրվում է Չովի. Քաջազնունուն՝ հիմնավորելով, որ դաշնակցությունը

<sup>6</sup> Ասլան Ստեփանեանի յուշերը, Թեհրան, 1966:

<sup>7</sup> Ջաղեթյան Գ., Մոտիկ անցեալից, Եր., 1969:

<sup>8</sup> Նաւասարդեան Վ., ՅՅԴաշնակցութեան անելիքը, մտքեր և յուշեր, Գահիրե, 1924:

դեռևս անելիք ունի: Հեղինակը իր մյուս աշխատությունում բուլշևիկյան իշխանությունը համարում է իսկական ստրկատիրություն՝ այն տարբերությամբ, որ ստրուկները գիտեին, որ իրենք տիրոջը պատկանող իր են, մինչդեռ բուլշևիկներն այդ մասին ոչինչ չէին հայտարարում<sup>9</sup>:

Վ. Գևորգյանի աշխատությունում<sup>10</sup>, որն աչքի է ընկնում փաստերի առատությամբ և անաչառ վերլուծությամբ, ամփոփված են 1919-1921 թթ. Լեռնահայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, ի մասնավորի՝ Գարեգին Նժդեհի պատմական մեծագույն առաքելության և անօրինակ սխրագործության տարեգրությունը: Ըստ այդմ՝ ներկայացված են նաև փետրվարյան իրադարձությունները՝ հիմնականում փաստագրական տվյալներով: Չնայած համեմատաբար փոքր ծավալին՝ այն կարևոր և արժանահավատ աղբյուր է թեմայի ուսումնասիրման համար:

Փետրվարյան ապստամբությանը մասնակիորեն անդրադարձել է նաև Եղ. Չուբարը<sup>11</sup>:

Կարևոր սկզբնաղբյուր է նաև Գ. Լազյանի ծավալուն ուսումնասիրությունը<sup>12</sup>:

Փետրվարյան ապստամբության պատմության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր ու տեղեկություններ է պարունակում քաղաքացիական կռիվների ամմիջական մասնակից, հայկական երկրորդ հրաձգային գնդի հրամանատար Ա. Բաղդասարյանի գիրքը<sup>13</sup>, որտեղ ներկայացված է 1921թ. փետրվարի 15-ից մինչև հուլիսի 13-ը ընկած ժամանակահատվածում Ղամարլուի, Դարալազյազի և Ջանգեզուրի ճակատներում տեղի ունեցած ռազմական գործողությունների վերլուծությունը<sup>14</sup>:

Խորհրդային պատմագրության անուրանալի ձեռքբերումներից է նշանավոր բուլշևիկ Բ. Բորյանի՝ երկհատոր աշխատությունը<sup>15</sup>, որի երկրորդ հատորում հեղինակը համառոտակի անդրադարձել է նաև 1921 թ. փետրվարյան ապստամբությանը: Գրքում նշված են ապստամբության պատճառները, ցույց են տրված Հայհեղկոմի սխալները, շեշտված է, որ նրա կիրառած բռնագրավման քաղաքականությունն է հիմնական պատճառ դարձել հակաբուլշևիկյան շարժման ծավալման, որը հեղինակը անվանում է «ժողովրդական շարժում»:

Հայաստանի առաջին հանրապետության վերջին և 1921 թ. փետրվարյան ապստամբության շրջանում ՀՀԴ-ի վարած քաղաքականության վերլուծությանն է նվիրված Գ. Չուբարյանի աշխատությունը<sup>16</sup>, որտեղ հեղինակը հանդես է եկել խստորեն ընդգծված հակադաշնակցական կեցվածքով. մոյսիսկ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սանձազերծման ողջ պատասխանատվությունը գցում է կուսակցության վրա:

<sup>9</sup> Նաևասարգեան Վ., ՀՀԴ-ի ճակատագրի «լիկվիդացիան» (բուլշևիզմի սնանկութեան առթիվ), Գահիրե, 1924:

<sup>10</sup> Գևորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 1991:

<sup>11</sup> Չուբար Եղ., Խորհրդային իշխանության չորս տարվա գործերից, Եր. 1924, Նոյեմբերի 29 (հիշողություններ), Եր., 1925:

<sup>12</sup> Լազյան Գ., Հայաստանը և հայ դատը հայ և ռուս յարաբերություններում լոյսին տակ, Եր., 1991:

<sup>13</sup> Բաղդասարյան Ա., Քաղաքացիական կռիվները Հայաստանում, Եր., 1928:

<sup>14</sup> Բաղդասարյան Ա., Հայկական դիվիզիայի անցյալից, Եր., 1930:

<sup>15</sup> Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 2, Москва-Ленинград, 1929.

<sup>16</sup> Չուբարյան Գ., Ղազնակցության տաճկական օրինտագիան և Հայրենիքի Փրկության կոմիտեն, Եր., 1929:

Խնդրո թեմային է անդրադարձել նաև քաղաքացիական կռիվների մասնակից Գ. Օգանեզովը իր պատմական և պատմագեղարվեստական մի քանի գրքերում<sup>17</sup>:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր է նաև հայկական դիվիզիայի քաղաքաժնի կողմից պատրաստված «Ղանարլուիից Ձանգեզուր (հիշողություններ Չայաստանի քաղաքացիական կռիվներից)» ակնարկների ժողովածուն<sup>18</sup>:

Կարմիր բանակի քաղաշխատող Յ. Վարդանյանի գիրքը՝ նվիրված Չայաստանում քաղաքացիական կռիվների տասնամյակին, գրված է ինչպես հուշագրական, այնպես էլ վավերագրական նյութերի հիման վրա: Նրանում թուռցիկ անդրադարձ է կատարվել նաև փետրվարյան ապստամբությանը<sup>19</sup>:

Փետրվարյան իրադարձություններին, նրա պատճառներին, բնույթին և հարակից այլ հարցերի անդրադարձել է Շահան Նաթալին<sup>20</sup>:

Արսեն Ժամկոչյանի «Զօրավար Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն» աշխատության մեջ Անդրանիկը անգիջում հակադաշնակցական կեցվածք է դրսևորում, մեղադրում դաշնակցականներին իր անուճով արտասահմանից ուղարկված դրամները իրենից բռնությամբ խլելու և Թավրիզ տանելու համար<sup>21</sup>:

Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր է նաև Ա. Հակոբյանի աշխատությունը<sup>22</sup>, որտեղ հեղինակը նախ՝ համառոտ գծերով ներկայացնում է խորհրդային իշխանության առաջին քայլերը Չայաստանում, խորհրդային Չայաստանի ներքին և արտաքին վիճակը՝ 1920 դեկտեմբերի սկզբից մինչև 1921թ. փետրվարի կեսերն ընկած ժամանակահատվածում, ապա մանրամասն ներկայացնում՝ քաղաքացիական կռիվների ողջ ընթացքը՝ այն բաժանելով երեք փուլերի:

Նույն հեղինակն իր մեկ այլ աշխատության մեջ այն միտքն է զարգացնում, որ փետրվարյան «ավանտյուրան» սերտորեն շաղկապված էր միջազգային հակախորհրդային ռեակցիայի հետ և վերջինիս դրսևորումներից մեկն էր Անդրկովկասում: Ա. Հակոբյանի ուսումնասիրությունը գրված է ընդգծված հակադաշնակցական դիրքերից, դաշնակցականները ներկայացված են որպես օտարերկրյա իմպերիալիստների և Թուրքիայի գործակալներ<sup>23</sup>:

Ա. Հակոբյանն առանձին աշխատություն<sup>24</sup> է գրել նաև 1921 թ. փետրվարյան ապստամբության մասին, որը նա որակում է որպես «ավանտյուրա», ուստի ակնհայտորեն փառաբանում է այն ճնշելու համար բոլշևիկյան ղեկավարության ձեռնարկած գործողությունները, իսկ ապստամբության ճնշումը դիտում Չայաստանի և հայ գյուղացիների հերոսական պայքարի փայլուն էջերից մեկը:

<sup>17</sup> Օգանեզով Գ., Կարմիր արշավանք, եր., 1930: Նույնի՝ Զինվորի օրագրից, եր., 1956: Դիվիզիայի հրամանատար Աթոյան, եր., 1973: Воспоминания старога солдата, Ереван, 1979.

<sup>18</sup> «Ղանարլուից -Ձանգեզուր», եր., 1931:

<sup>19</sup> Վարդանյան Յ., Քաղաքացիական պատերազմը Չայաստանում, եր., 1931:

<sup>20</sup> Շահան, Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930-ի կովկասեան ապստամբութիւնները, հ. Ա., Մարսեյլ, 1934: Երևանի համաձայնագիրը, Պոսթըն, 1941:

<sup>21</sup> Ժամկոչյան Ա., Զօրավար Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945:

<sup>22</sup> Հակոբյան Ա., Քաղաքացիական կռիվները Չայաստանում 1921 թվին, եր., 1948:

<sup>23</sup> Հակոբյան Ա., Սովետական Չայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925), եր., 1955:

<sup>24</sup> Հակոբյան Ա., Չայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, եր., 1960:



Հայաստանում խորհրդային իշխանության համար մղած պայքարին է նվիրված Գևորգ Ղարիբջանյանի աշխատությունը<sup>25</sup>, որում հեղինակն այն միտքն է զարգացնում, որ փետրվարյան «ավանտյուրան» խորհրդային իշխանության դեմ օտարերկրյա իմպերիալիստների և դաշնակցականների կողմից ոգեշնչվող հակահեղափոխական ուժերի խռովություն է:

Հայաստանում խորհրդային իշխանության համար մղված պայքարին Ռուսաստանի ցուցաբերած օգնությանը, ինչպես նաև Հայաստանի Կարմիր բանակի կազմավորմանն է նվիրված Ա. Վարդապետյանի աշխատությունը<sup>26</sup>, որտեղ ընդօժված հակադաշնակցական դիրքերից անդրադարձ է կատարվել քաղաքացիական կռիվներին:

Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներին Ա. Վարդապետյանն անդրադարձել է նաև մեկ ուրիշ աշխատության մեջ, որտեղ, ներկայացնելով 1920 թ. հուլիս - 1921 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում 11-րդ Կարմիր բանակի ռազմական գործողությունները Ձանգեզուրում, հիմնական գծերով նկարագրել է նաև փետրվարյան ապստամբության ընթացքը՝ որակելով այն որպես «հակահեղափոխական ավանտյուրա»<sup>27</sup>:

1921թ. Հայաստանում ծավալված քաղաքացիական կռիվներին անդրադարձել է նաև Ծատուր Աղայանը, որն իր մենագրությունում<sup>28</sup> գիտական շրջանառության մեջ է դրել արխիվային մի շարք նյութեր:

Ա. Սողոմոնյանն իր աշխատության<sup>29</sup> մեջ թեև փետրվարյան իրադարձությունները որակում է որպես «ավանտյուրա», բայց և այնպես տվյալ թեմայով լույս տեսած աշխատությունների թվում նրա գիրքն առանձնանում է բազմազան աղբյուրների լայն օգտագործմամբ:

«Հին բուլշևիկների հիշողությունները» գրքի երկու հատորներում (1958, 1961) դեպքերը և դեմքերը խիստ սուբյեկտիվ են ներկայացված<sup>30</sup>:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը նվիրված իր աշխատության մեջ<sup>31</sup> Զ. Գրիգորյանը փետրվարյան իրադարձություններն որակում է որպես «հակահեղափոխական ավանտյուրա», «դաշնակների փետրվարյան ավանտյուրա», «քաղաքացիական կռիվներ», որոնք, ըստ նրա, կազմակերպել էին դաշնակցականները օտարերկրյա իմպերիալիստների աջակցությամբ:

Խնդրո առարկա թեմային անդրադարձել են նաև ռուս հետազոտողներ, որոնցից Ա. Կադիշն է իր աշխատության<sup>32</sup> մեջ հանգամանակից ներկայացնում է Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման համար 1917-1919 թթ. մղված պայքարը: Իրավացիորեն փաստելով, որ տվյալ ժամանակամիջոցում Անդրկովկասը հանդես էր գալիս որպես ռազմական գործողությունների թատերաբեմ՝ հեղինակը նկարագրում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, անդրադառնում թուրք - գերմանական ինտերվենցիային և թուրքերի ներխուժմանն Անդրկովկաս: Կադիշն իր աշխատությունում զգալի տեղ է հատկացրել

<sup>25</sup> Ղարիբջանյան Գ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, եր., 1955:

<sup>26</sup> Վարդապետյան Ա., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920-1925թթ., եր., 1957:

<sup>27</sup> Վարդապետյան Ա., Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921թթ., եր., 1960:

<sup>28</sup> Աղայան Ծ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, եր., 1957:

<sup>29</sup> Սողոմոնյան Ա., Քաղաքացիական կռիվները Ձանգեզուրում 1920-1921 թթ., եր., 1958:

<sup>30</sup> Հին բուլշևիկների հիշողությունները, գիրք 1, եր., 1958, գիրք 2, եր., 1961:

<sup>31</sup> Գրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, եր., 1960:

<sup>32</sup> Калинин А., Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960.

նաև փետրվարյան իրադարձություններին՝ դրանք որակելով իբրև «դաշնակցության ավանտյուրա»:

1920-1921 թթ. Անդրկովկասում 11-րդ կարմիր բանակի ռազմական գործողություններին է նվիրված Մարկ Տրասկունովի գիրքը, որտեղ հեղինակը նկարագրել է նաև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման համար Կարմիր բանակի մղած կռիվները, 1921 թ. քաղաքացիական կռիվներում նրա խաղացած դերը<sup>33</sup>:

Ա. Մնացականյանն իր մենագրություններից մեկում<sup>34</sup> փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս Ռուսաստանի աջակցությունը Անդրկովկասում խորհրդային իշխանության համար պայքարող ուժերին: Հեղինակն առաջադրում է այն տեսակետը, որ դաշնակցականները դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ընդամենը ժամանակ են շահել՝ հետագայում կազմակերպված պայքարի դուրս գալու համար:

Հակադաշնակցական ընդգծված կողմնակալությամբ և գիտական աշխատանքին անհարիր պիտակավորումներով զրկված իր մեկ այլ աշխատության մեջ<sup>35</sup> Ա. Մնացականյանը ներկայացնում է փետրվարյան իրադարձությունների պատճառները, բնույթը, նպատակները, խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանի կյանքում կատարված քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխությունները:

խորհրդահայ պատմաբանները Ս. Կարապետյանն իր աշխատության<sup>36</sup> մեջ հիմնական գծերով է ներկայացրել 1921 թ. փետրվարյան իրադարձությունները:

Անդրկովկասում և Հայաստանում 1917-1921 թթ. ծավալված իրադարձությունների լուսաբանմանն է նվիրված Ս. Ալիխանյանի աշխատությունը, որտեղ զգալի տեղ է հատկացված 1921 թ. փետրվարյան ապստամբությանը, որը հեղինակն որակում է որպես դաշնակցականների կողմից կազմակերպված «ավանտյուրա»: խորհրդահայ մյուս աշխատությունների մեջն այն զրկված է հակադաշնակցական դիրքերից, ուստի վերջիններս մեղադրվում են Հեղկոմի սիրալիր վերաբերմունքը չարաշահելու համար, իսկ դաշնակցականների նկատմամբ կիրառած բռնությունները դիտվում են որպես նախապատրաստվող ավանտյուրայի կանխարգելիչ միջոց: Այս ամենով հանդերձ՝ գիրքը բավականին ուշագրավ և կարևոր է հիմնախնդրի ուսումնասիրման համար<sup>37</sup>:

Հեղինակն իր մեկ այլ աշխատությամբ<sup>38</sup> ներկայացրել է ՌԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի Կովկասյան բյուրոյի նախագահ Գ. Օրջոնիկիձեի խաղացած դերը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և անրապնդման համար ուղղված պայքարում, ինչպես նաև Օրջոնիկիձեի դերը «փետրվարյան ավանտյուրայի» ջախջախման գործում:

Փետրվարյան ապստամբությանն իր գրքում<sup>39</sup> անդրադարձել է նաև Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանը: Գրքի հիմքում հիմնականում ընկած են, իհարկե, հեղինակի սեփական հիշողությունները, որոնք հեղինակը գրի է առել դեպքերից տասնամյակներ անց: Ճիշտ է, Շ. Ամիրխանյանն ըստ կարելիվույն օգտագործել է նաև արխիվային փաստաթղթեր և այլ

<sup>33</sup> Траскунов М., Кавказская краснознаменная, Тбилиси, 1961.

<sup>34</sup> Մնացականյան Ա., Ռուսլուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917-1921), Եր., 1961:

<sup>35</sup> Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցության նենգափոխության, Եր., 1976:

<sup>36</sup> Կարապետյան Ս., 1920թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Հայաստանը, Եր., 1965:

<sup>37</sup> Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր., 1966:

<sup>38</sup> Ալիխանյան Ս., Գ. Կ. Օրջոնիկիձեի և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974:

<sup>39</sup> Амрханян Ш., Из истории борьбы за советскую власть в Армении, Ер., 1967.

ականատեսների հիշողություններ, բայց և այնպես չկարողանալով քիչ թե շատ հաղթահարել կուսակցական ու դեպքերին անմիջական մասնակցի անձնական սուբյեկտիվիզմը՝ պատմական դեպքերն ու իրողությունները ներկայացնում է խիստ կողմնակալ ու կանխակալ դիրքերից: Ասվածի վկայություն թեկուզ և այն, որ Շ. Ամիրխանյանը 1921 թ. փետրվարյան իրադարձությունները բնորոշում է որպես արկածախնդրություն - ավանտյուրա՝ կազմակերպված դաշնակցականների կողմից, իսկ միակ բանը, որում հեղինակը մեղադրում է բոլշևիկներին այն է, որ իբր վերջիններս շատ միամիտ ու անփորձ լինելով, վստահել են դաշնակցականներին:

Փետրվարյան իրադարձություններին Ա. Եսայանն անդրադարձել է 1920-1922 թվականներին Հայաստանի միջազգային-իրավական դրությանը նվիրված ուշագրավ աշխատության մեջ<sup>40</sup>, որտեղ հանգամանորեն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի, Անդրկովկասի հարևան պետությունների, Անտանտի տերությունների, ԱՄՆ-ի և Խորհրդային Ռուսաստանի հետ: Անողոր և երբեմն անհարկի քննադատելով Առաջին հանրապետության կառավարության «արատավոր» քաղաքականությունը՝ հեղինակը դրա հետևանք է համարում Հայաստանի վերածումը «Անտանտի հակասովետական գործունեության բազայի»:

Խորհրդահայ պատմաբաններից Ս. Սահրադյանը, իր աշխատության մեջ<sup>41</sup> ներկայացնելով ռազմահեղափոխական կոմիտեների գործունեությունը Խորհրդային Հայաստանում, անդրադարձել է նաև փետրվարյան իրադարձություններին և դրանք որակել է Անտանտի իմպերիալիստների թելադրանքով ու քեմալական թուրքիայի և մենշևիկյան Վրաստանի օգնությամբ ծագած քաղաքացիական կռիվներ: Ճիշտ է, գիրքը գրված է հակադաշնակցական դիրքերից, բայց, այդուհանդերձ, հետաքրքիր նյութեր է պարունակում քաղաքացիական կռիվների ընթացքում ռազմահեղափոխական կոմիտեների ծավալած գործունեության մասին:

Ավ. Եսփունձյանն իր աշխատությունում<sup>42</sup> անողոր քննադատության է ենթարկել Փետրվարյան ապստամբությունը, նրա կազմակերպիչներին ու ղեկավարներին, վերլուծել ապստամբության հետևանքները:

Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի վրա հիմնված իր գրքում<sup>43</sup> Իվան Թաիրյանը, ներկայացնելով Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման համար մղված պայքարում 11-րդ Կարմիր բանակի խաղացած դերը, հանգամանորեն անդրադարձել է նաև փետրվարյան ապստամբությանը:

Խիստ հակադաշնակցական դիրքերից է գրված նաև Բ. Օհանջանյանի աշխատությունը<sup>44</sup>, որը, անդրադառնալով փետրվարյան ապստամբությանը, դաշնակցության գործունեությունը ներկայացնում է ամենամռայլ զույներով, իսկ դաշնակցական գործիչներին՝ անհարկի պիտակավորումներով:

Խնդրո առարկա թեմային իր հուշերում անդրադարձել է նաև հայ նշանավոր գորապետ, Խորհրդային Միության մարշալ Հովի. Բաղդամյանը<sup>45</sup>: Իբրև դեպքերի անմիջական ականատես՝ հեղինակը դրանք նկարագրում է հակադաշնակցական դիրքերից: Նա գովերգում է բոլշևիկյան իշխանությունը, բացառապես դրական

<sup>40</sup> Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922թթ., Եր., 1967:

<sup>41</sup> Սահրադյան Ս., Ռազմառևոյուցիոն կոմիտեները Հայաստանում, Եր., 1967:

<sup>42</sup> Եսփունձեան Ա., Ո՛վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը և ի՞նչ եղաւ անոր հետևանքը, Փահիրե, 1969:

<sup>43</sup> Таирян И., Красная армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, Ер., 1971.

<sup>44</sup> Օհանջանյան Բ., Դաշնակցությունը առանց դիմակի, Եր., 1978:

<sup>45</sup> Багдамян И., Мои воспоминания, Ашгастан, Ер., 1979.

կողմերով է ներկայացնում հեղկոմի իրականացրած քաղաքականությունը Չայաստանում: Հարկ է նշել նաև, որ աշխատությունը գրելու համար հեղինակը օգտագործել է զգալի չափով արխիվային վավերագրեր և մի շարք աշխատություններ:

Է. Ջոիրաբյանն իր արժեքավոր մենագրության մեջ<sup>46</sup> վերլուծում է քենայական շարժումը և հայ-թուրքական հարաբերությունները Չայաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին, ներկայացնում Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը Չայաստանում իշխանության գոյության առաջին ամիսներին (1920 թ. նոյեմբեր – 1921 թ. ապրիլ), Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Աշխատությունն ընդհանուր առմամբ գրված է հակադաշնակցական դիրքերից: Սակայն պետք է նշել, որ Է. Ջոիրաբյանը խորհրդահայ պատմաբաններից առաջինն է, որ պատմական փաստերի ժամանակագրական օբյեկտիվ մեկնաբանությամբ ցույց է տվել, որ մարտի 12-ի Սիմոն Վրացյանի արած հայտնի ռադիոհայտարարությունը չէր կարող հետադարձ ազդեցություն ունենալ փետրվարի 26-ին Չայաստանի պատվիրակության՝ Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա:

Գ. Գալոյանն իր աշխատություններից մեկում<sup>47</sup> թռուցիկ անդրադարձ կատարելով փետրվարյան իրադարձություններին, աներկբա գրում է, որ «դաշնակցականների ազգադավ քաղաքականության» հետևանքով Արևելյան Չայաստանի տարածքի մի զգալի մասը, այդ թվում՝ Կարսը, Արդահանը, մնացին Թուրքիայի սահմաններում: Իսկ իր մեկ այլ աշխատության մեջ<sup>48</sup> Գ. Գալոյանը, անդրադառնալով փետրվարյան իրադարձություններին, դրանք որակեց որպես հակախորհրդային խռովություն:

Ա. Լալայանը, իր գրքույկի<sup>49</sup> հիմքում դնելով 1917-1921 թթ. Ձանգեզուրում տեղի ունեցած դեպքերի մասին հուշերը, թեև օգտագործել է նաև արխիվային մի շարք նյութեր, այնուամենայնիվ խորհրդահայ շատ պատմաբանների մասն փետրվարյան իրադարձությունները բնորոշել է որպես ավանտյուրա:

Փետրվարյան ապստամբությանն իր աշխատությունում անդրադարձել է նաև Հ. Սիմոնյանը<sup>50</sup>: Հեղինակը, անդրադառնալով 1921 թ. Մոսկվայի պայմանագրին, նշում է, որ դաշնակցության բարձրացրած խռովության և մասնավորապես Սիմոն Վրացյանի՝ Մոսկվա ուղարկած հեռագրի պատճառով հայ պատվիրակը չկարողացավ մասնակցել խորհրդաժողովին: Սակայն, կարծում ենք, որ վիճելի է հեղինակի նման տեսակետը, քանզի հայտնի է, որ Սիմոն Վրացյանի ռադիոգիր-հեռագիրն ուղարկվել է մարտի 12-ին, երբ ռուս-թուրքական խորհրդաժողովը մտել էր եզրափակիչ փուլ, իսկ հայ պատվիրակների մասնակցությունը խորհրդաժողովին արգելվել էր դեռևս փետրվարի 26-ին:

Բ. Խուրավերոյանի հետազոտությունում<sup>51</sup> անդրադարձ է կատարվել 1921 թ. փետրվարյան իրադարձություններին, որը հեղինակը որակում է մեկ որպես «փետրվարյան խռովություն», մեկ որպես արկածախնդրություն՝ ըստ երևույթին այդ բառերի մեջ ոչ մի տարբերություն չընելով: Բ. Խուրավերոյանի կարծիքով, փետրվարյան խռովությունը նախապես կանխատեսված գործողություն էր, որի

<sup>46</sup> Ջոիրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ -թուրքական հարաբերությունները, Եր., 1979:

<sup>47</sup> Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982:

<sup>48</sup> Գալոյան Գ., Չայաստանը և Մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999:

<sup>49</sup> Լալայան Ա., Ձանգեզուրյան դրվագներ 1917-1921թթ., Եր., 1985:

<sup>50</sup> Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986:

<sup>51</sup> Խուրավերոյան Բ., Ձանգեզուր (1917-1921), Եր., 1988:

նպատակն էր առաջացնել հակահեղափոխական շարժում ոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ Կովկասում: Իսկ նույն ժամանակներում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները Բ. Խուրավերոյանը համարում է փետրվարյան արկածախնդրության բաղկացուցիչ մաս:

Խորհրդահայ պատմաբաններից խնդրին այս կամ այն չափով անդրադարձել է նաև Մ. Արզումանյանը<sup>52</sup>:

«Վերակառուցման» ու 1988 թ. սկսած դարաբաղյան ազգային ազատագրական շարժման վերելքի և հայության ազգային զարթոնքի շրջանում իրավացիորեն մեծացավ գիտնականների հետաքրքրությունը 1921 թ. փետրվարյան ապստամբության պատմության հանդեպ:

Այսպես՝ դեռևս 1987 թ. հրատարակվեց Լ. Խուրշուդյանի, Կ. Սարգսյանի, Յու. Գոլսեփյանի, Գ. Գեղամյանի, Ս. Ամիրյանի և ուրիշների կողմից պատրաստված հոդվածների ժողովածուն<sup>53</sup>: Նրանում քննարկվում են 1920-21 թթ. Հայիեղկոսի ՀԿ (Բ) Կենտկոմի ներսում առաջացած տարածայնությունները, ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:

Հ. Տասնապետյանը, լուսաբանելով 1890-1924 թթ. դաշնակցության պատմությունը<sup>54</sup>, ներկայացրել է դաշնակցականների և բոլշևիկների հարաբերությունները, անդրադարձել փետրվարյան իրադարձություններին՝ որակելով դրանք ժողովրդական ապստամբություն: Թեև Հ. Տասնապետյանն առանձնապես չի խորացել խնդրի ուսումնասիրության մեջ, հարցերը դիտարկել է զուտ Դաշնակցության գաղափարախոսության դիրքերից, այնուամենայնիվ նրա գիրքն ամբողջության մեջ արժեքավոր է, պարունակում է փաստացի հարուստ նյութ:

Ռ. Փիրունյանն իր աշխատության մեջ անդրադարձել է 1921 թ. փետրվարյան իրադարձություններին՝ որակելով դրանք խորհրդային իշխանության դեմ ուղղված զանգվածային ապստամբություն<sup>55</sup>:

Հետխորհրդային պատմագրության մեջ խնդրո առարկայի ուսումնասիրմանն է նվիրված Ա. Սիմոնյանի արժեքավոր աշխատությունը<sup>56</sup>, որում հեղինակը առաջնորդվել է պատմական երևույթները, դեպքերն ու դեմքերը գնահատելու պատմաքննադատական մեթոդով՝ տալով այդ իրադարձությունների հնարավորինս անկողմնակալ վերլուծությունը: Իսկ որ շատ կարևոր է, խուսափել է գործող ուժերին անհարկի պիտակներ կպցնելուց, «թշմախ» կամ «բարեկամ» որակելուց:

Վ. Ղազախեցյանը սկզբնաղբյուրների նյութերի հիման վրա զրված աշխատության մեջ<sup>57</sup> հիմնականում լուսաբանում է Ձանգեզուրում Գ. Նժդեհի գլխավորությամբ ծավալված իրադարձությունների այն ժամանակահատվածը, երբ Հայաստանը դարձավ խորհրդային, և վերջինիս համար ծառացավ երկրամասը իրեն միացնելու խնդիրը: Հեղինակը զարգացրել է այն տեսակետը, որ Ձանգեզուրի հերոսամարտերը և փետրվարյան ապստամբությունը փոխազդել են մեկը մյուսի վրա: Վ. Ղազախեցյանը ապստամբությանն անդրադարձել է նաև իր մեկ այլ

<sup>52</sup> Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989:

<sup>53</sup> Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922), Եր., 1987:

<sup>54</sup> Տասնապետեան Հ., ՀՀԿճաշնակցութիւնը իր կազմութենէն մինչե՛ր ժ ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988:

<sup>55</sup> Փիրունեան Ռ., Հայաստանը ՀՀԿ-բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում /1917-1921/, Եր., 1997:

<sup>56</sup> Սիմոնյան Ա., Ձանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Եր., 2000:

<sup>57</sup> Ղազախեցյան Վ., Նժդեհը Ձանգեզուրում 1920թ. վերջ-1921թ. հուլիս, Եր., 2001:

աշխատության<sup>58</sup> մեջ՝ օգտվելով արխիվային հարուստ նյութերից ու հրապարակի վրա առկա գրականությունից:

1921 թ. փետրվարյան իրադարձություններին թռուցիկ անդրադարձ է կատարել նաև Ա. Ներսիսյանը՝ ներկայացնելով դրանք որպես համաժողովրդական ապստամբություն, որը, ըստ հեղինակի, փրկեց հայ մտավորականությանն ու քաղաքական ղեկավարության «ծաղկին» արմատախիլ լինելուց<sup>59</sup>: Ա. Ներսիսյանի մյուս աշխատությունը նվիրված է 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի, Դաշնակցության, փետրվարյան ապստամբության կազմակերպիչներից և ակտիվ մասնակիցներից մեկի՝ Կարո Սասունու կյանքի ու գործունեության լուսաբանմանը<sup>60</sup>:

Մենագրական հետազոտության նյութ դարձնելով 1920-1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը<sup>61</sup>, Կ. Խաչատրյանը նորովի է լուսաբանել Հայաստանի խորհրդայնացման, 1921 թ. փետրվարյան ապստամբության, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, միջպետական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հիմնախնդիրները:

Փետրվարյան ապստամբությանն իրենց աշխատություններում տարբեր առիթներով ու տարբեր չափով անդրադարձել են նաև Մ. Կարապետյանը և Է. Գևորգյանը<sup>62</sup>, Է. Չոհրաբյանը<sup>63</sup>, Յ. Գևորգյանը<sup>64</sup>, Է. Հովհաննիսյանը<sup>65</sup>, Ա. և ուրիշներ: Վերջին տարիներին թեմային նվիրված հոդվածներով են հանդես գալիս Ա. Հակոբյանը<sup>66</sup>, Յ. Գրիգորյանը<sup>67</sup> և ուրիշներ:

#### **ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսություն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ 9 ենթագլուխներով, եզրակացություններից ու օգտագործած սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ** հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է գիտական նորույթը, հարցի ուսումնասիրվածության աստիճանը, տրվել են թեմային վերաբերող աղբյուրների և գրականության տեսությունը:

*Առաջին գլուխը՝ « ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ »* բաղկացած է երկու ենթագլխից:

*Առաջին ենթագլխում՝ «խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում»* ամփոփ կերպով ներկայացված է քենալաբուլշիկյան համագործակցությունը և նրա ամնիչական հետևանքը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

<sup>58</sup> Ղազարխեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006:

<sup>59</sup> Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Եր., 2003:

<sup>60</sup> Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Եր., 2004:

<sup>61</sup> Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Եր., 2007:

<sup>62</sup> Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ., Եր., 2007:

<sup>63</sup> Չոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Եր., 2010:

<sup>64</sup> Գևորգյան Յ., Դրո, Եր., 2007:

<sup>65</sup> Оганесян Э., Век борьбы, т. 1, Мюнхен-Москва, 1991.

<sup>66</sup> Հակոբյան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ, «ՎԷՄ», թիվ 1(33), հունվար-մարտ, 2011, էջ 139-152: Նույնի Մի ամբաստանության հետքերով. Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից պետական փողերի իրացման հարցի շուրջ, «ՎԷՄ», թիվ 4 (36), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, էջ 140-152:

<sup>67</sup> Գրիգորյան Յ., 1921 թ. փետրվարյան ապստամբությունը, Հայաստանում, Տարեգիրք Բ պատմագիտական հանդես, Եր., 2010, էջ 21-28:

Այս ենթագլխում հանգամանալից ներկայացված է Հայաստանի Հանրապետությունը խորհրդայանցման ճանապարհով նվաճելու խորհրդային Ռուսաստանի վաղօրոք ծրագրած ու մշակված քաղաքականությունը:

Հակիրճ կերպով անդրադարձ է կատարվել նաև հայ ժողովրդի պատմության սև էջերից մեկին՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմին, որը սպառնալիքի տակ էր դրել մեր ժողովրդի գոյությունը, և Ալեքսանդրապոլի հաշտության ստորագուցիչ պայմանագրին:

Ատենախոսության մեջ փաստական հարուստ նյութի վրա ցույց է տրվում, որ քեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որին փոխարինելու եկավ Հայաստանի Երկրորդ Հանրապետությունը՝ խորհրդային Հայաստանը: Իսկ Հայաստանի խորհրդայանցումն ստեղծված անելանելի վիճակից դուրս գալու միակ ու լավագույն ելքն էր:

***Երկրորդ ենթագլխում՝ «Հայիեդկոմի գործունեության առաջին ամիսները»***

բացահայտված են փետրվարյան ապստամբության նախադրյալներն ու պատճառները:

Խորհրդային իշխանության հաստատման պահին երկրի քաղաքական և տնտեսական վիճակն անմխիթար էր. նորաստեղծ հանրապետության տարածքի կեսից ավելին բռնազավթված էր թուրք նվաճողների կողմից: Այդ օրհասական պայմաններում հայ ժողովուրդը նոր իշխանությունից, Երևանի համաձայնագրի դրույթներից և բուլշևիկների՝ բազմիցս տրված խոստումներից ու հայտարարությունից ելնելով, հույսով էր, որ կպաշտպանվեր Հայաստանի անկախությունը, կվերականգվեր պատերազմի հետևանքով քայքայված տնտեսությունը, վերջ կդրվեր պատերազմին, և թուրքերը կհեռանային Հայաստանի սահմաններից: Բացի այդ, Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերություններ կհաստատվեին Թուրքիայի և Հայաստանի միջև, կվերականգվեր երկրի խաղաղությունը, և ժողովուրդը խաղաղ շինարարության հնարավորություն կունենար: Այն համոզումը կար, որ Ռուսաստանը տնտեսական խոշոր օգնություն ցույց կտար, կվերականգնվեր երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և հարևան Վրաստանի, Ադրբեջանի ու Պարսկաստանի միջև, Ռուսաստանից հազուատեղե՛ն և այլ ապրանքներ կբերվեին, Բաքվից՝ վառելիք և վերջապես հալածանքի չէին ենթարկվի ոչ կոմունիստական քաղաքական կուսակցությունների պատկանող անդամները<sup>68</sup>:

Դժբախտաբար, ժողովրդի սպասելիքներից ոչ մեկը չարդարացավ, ու դեպքերն ընթացան ի վնաս հայության ու Հայաստան աշխարհի:

Խորհրդային Հայաստանի անդրանիկ մարմինը՝ Հեդկոմը, իր գործունեությունը սկսեց Երևանի համաձայնագրի խախտումով: Հատկանշական է, որ համաձայնագրի խախտողներից առաջինը Ռուսաստանի կողմից այն ստորագրած Բ. Լեգրանն էր: Նա Երևանի համաձայնագրի ստորագրման օրը՝ դեկտեմբերի 2-ին, ստորագրեց մի «Հրամանաթուղթ»՝ համաձայն որի ձեռքակալվեցին Հայաստանի հին կառավարության բոլոր անդամները: Հեդկոմի ձեռնարկած այս քայլերն ամբողջովին հակասում էին այդ նույն օրը Դրոյի և Տերտերյանի հետ ստորագրած համաձայնագրի ոգուն: Երևանի համաձայնագիրը փաստորեն չարժանացավ Հայիեդկոմի հավանությանը, իր իշխանության առաջին իսկ օրերին նա «անվավեր ճանաչեց» և

<sup>68</sup> Տե՛ս Աստուածատրյան Ա., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1965, թիվ 9, էջ 30:

«առ ոչինչ համարեց դեկտեմբերի 2-ի ակտը»<sup>69</sup>: Այս քայլը խոր դժգոհություն առաջ բերեց երկրում և սկիզբ դրեց հակախորհրդային խմորումներին:

Ստանձնելով իշխանությունը՝ Չայինգկոնը անմիջապես դիմեց քաղաքական բռնաճնշումների: Խորհրդային Չայաստանում հայ բուլձևիկները կրկնեցին խորհրդային Ռուսաստանում 1918-1920 թթ. բուլձևիկների կիրառած կառավարման ձևերը և փորձեցին իրականացնել նույն քաղաքականությունը: Ալ. Բեկզադյանը հայտարարում էր. «Չայաստանի բանվորները և գյուղացիները, երկրի իշխանությունը իրենց ձեռքը վերցնելով, քաղաքականության մեջ պետք է հետևեին խորհրդային Ռուսաստանին»<sup>70</sup>:

Չեղկոմի համար անընդունելի էր նաև Դրոյի ներկայությունը Երևանում: Մեծ էր նրա ունեցած ազդեցությունը ժողովրդի և ընդհանուր հանրային կարծիքի վրա: Բուլձևիկները «Պայլեր գառան մորթիներում» խորագրով հողվածում պահանջում էին կարմիր բանակի շարքերից հեռացնել Դրոյին և Սիլիկյանին<sup>71</sup>: Կուսակցության որոշմամբ ու իր համաձայնությամբ քաղաքացիական կռիվների առիթ չտալու համար Դրոն աքսորի ճամփան բռնեց և 1921 թ. հունվարի 10-ին դուրս եկավ Երևանից:

Դրոյի հեռանալուց հետո Չեկան ավելի սանձարձակ սկսեց գործել: Դրան նպաստեց նաև 11-րդ բանակի Զատուկ բաժնի ներկայացուցիչ Գևորգ Աթարբեկյանի ժամանումը Չայաստան՝ 1921 թ. հունվարի 12-ին<sup>72</sup>: Նա պահանջում էր Զամառուսաստանյան Չեկայի հրահանգների համաձայն՝ առանց որևէ քննության և արագ կերպով ձերբակալել անխտիր բոլոր սպաներին: «Աթարբեկյանը նախապատվությունը տալիս էր բռնությանն ու զենքին: Նա պատրաստ էր ձերբակալել բոլորին,- գրում էր Կարապետյանը<sup>73</sup>: Գ. Աթարբեկյանի պահանջով 1921 թ. հունվարի 20-ին կատարվեց նախկին սպաների նոր ցուցակագրություն, և ձմռան ցրտին նրանց բոլորին ոտքով, Սեմյոնովկայի լեռնանցքով հասցրին Աղստաֆա, այստեղից գնացքով Բաբու, ապա Ռյազան: Նրանց մեջ էին զեներալներ Թ. Նազարբեկյանը, Դ. Փիրումյանը, Մ. Սիլիկյանը, Ա. Զովսեփյանը և ուրիշներ: Գնապատ Պողոս Բեկ-Փիրումյանը, չտանելով ահավոր նվաստացումը (վաստակած ուսադիրներ պոկել էին ու ծաղրում էին), Երևանում ինքնասպան եղավ (հունվարի 19-ին):

Չայկական բանակի սպայական անձնակազմի աքսորից հետո բուլձևիկների բռնություններն ավելի սաստկացան: Եվ ահա, փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ: Պետք է նշել, որ Չեղկոմը, չբավարարվեց միայն հեղափոխության «թշնամիների» բնաջնջումով: Անօրեն բռնություններից զերծ չմնաց նաև հասարակ ժողովուրդը: Ժողովրդի նկատմամբ բռնությունների կիրառման գործընթացը ևս սկսվեց Չայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից:

Չայաստանի նորաստեղծ խորհրդային իշխանությունը հետևեց խորհրդային Ռուսաստանի օրինակին ու փորձին՝ երկրի ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ: Խոսքը վերաբերում է այսպես կոչված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությանը, որը Ռուսաստանում սկսել էր կենսագործվել 1918 թ. քաղաքացիական պատերազմի պայմաններում, իսկ քաղաքացիական կռիվների ավարտից հետո՝ 1920 թ. վերջին ու 1921 թ. սկզբին այնտեղ արդեն մտածում էին «ռազմական կոմունիզմից» հրաժարվելու և նոր

<sup>69</sup> Տե՛ս Զովհաննիսյան Ա., Զամազգային կրիզիսը, Եր., 1926, էջ 26:

<sup>70</sup> Բեկզադյան Ա., Նամակներ, հողվածներ, փաստաթղթեր, Եր., 1981, էջ 83-84:

<sup>71</sup> ԶԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 191, թ. 1:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 12:

<sup>73</sup> Տե՛ս Կարապետյան Զ., Մեծ պայքարի մարդիկ, Գիրք I, Եր., 1963, էջ 427:



քաղաքականության անհրաժեշտության մասին: Այս հանգամանքը, սակայն, չխանգարեց Հայաստանի ղեկավարներին, որոնք շտապեցին այստեղ կրկնել ռուսական օրինակը: Այսպես, Հայաստանում ընդունվեցին բռնագրավման բազում ղեկրետներ ու հրամաններ, որոնք էլ ավելի անտանելի դարձրեցին հայ ժողովրդի վիճակը:

Հեղկոմի իշխանության օրոք ծանր էր երկրի ոչ միայն ներքին վիճակը, այլ նաև արտաքին դրությունը: Խորհրդայնացումից հետո էլ Հայաստանը կտրված մնաց արտաքին աշխարհից:

Վրաստանը արգելեց Բաթումից Հայաստան պարենի ու ապրանքների փոխադրությունը՝ դրանով իսկ ավելի խորացնելով Հայաստանի շրջափակումը:

Իրավիճակը նույնն էր նաև տարածքային վեճերի պարագայում (Ղարաբաղ, Ջանգեզուր, Նախիջևան, Լոռի): 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի ղեկավար Ն. Նարիմանովի՝ Հայիեղկոմին ուղարկած հեռագիրը, որով Խորհրդային Ադրբեջանը Հայաստանին եղբայրաբար զիջում էր Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը, մնաց լուրջ փաստաթուղթ: Ղարաբաղը մնաց Ադրբեջանի ձեռքում, Նախիջևանն էլ՝ թուրք-բոլշևիկյան գրավման տակ:

Ռուսաստանից պարեն ստանալու հույսն էլ ի դերն եղավ:

Շատ ավելի բարդ էր բոլշևիկների հարաբերությունները թուրքերի հետ: Բոլշևիկները հավատացնում էին ամենքին, թե թուրքերի թշնամությունը դեպի հայերը հետևանք է դաշնակցականների նկատմամբ տածած ատելության. բավական է Հայաստանը հայտարարել խորհրդային և եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական հարաբերությունները կբարելավվեն, և թուրքական բանակը անմիջապես կհեռանա Ալեքսանդրապոլից ու Կարսից: Բայց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո քեմալականները չդադարեցին հայ ժողովրդի դեմ իրենց դավերը: Այժմ նրանք սկսեցին տարածել նոր վարկած, թե Հայաստանի նորահաստատ իշխանությունը կեղծ է, ըստ էության խորհրդային չէ, այն դաշնակցական իշխանության մի տարբերակ՝ քողարկված բոլշևիզմի դրոշով: Եվ որպես ապացույց նշում էին Հայաստանի առաջին խորհրդային կառավարության մեջ Դրոյի ներկայությունը:

Փաստորեն, բոլշևիկյան իշխանությունը ոչ միայն չկատարեց Երևանի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, այլև հետագա շաբաթներին լայնածավալ բռնություններ իրականացրեց երկրում: Այս ամենը ժողովրդի աչքում վարկաբեկեց նոր իշխանություններին: Ավելին՝ Հայաստանում բոլշևիկների կողմից իրականացված բռնությունները հանգեցրին ներքաղաքական իրադրության կտրուկ սրման: Այս ենթագլխում մանրամասն ներկայացնելով հեղկոմի իրականացրած ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ փետրվարյան ապստամբության նախադրյալներն ու պատճառները ստեղծել են հենց իրենք բոլշևիկները՝ իրենց վարած հանցավոր քաղաքականությամբ: Ուշագրավ է այն հանգամանք, որ Հեղկոմի վարած քաղաքականության հետ են կապում ապստամբության պատճառները նույնիսկ բոլշևիկ մի շարք գործիչներ՝ Ա. Հովհաննիսյանը, Ա. Մռավյանը և այլոք:

**Երկրորդ գլուխը՝ «ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՐՈՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ»** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Ապստամբության սկիզբը»** հակիրճ ներկայացված է փետրվարյան ապստամբության նախապատրաստման և ղեկավարման հարցի վերաբերյալ պատմագրության մեջ առկա երկու միմյանց հակադիր տեսակետները:

խորհրդակալ պատմագրությունը այն տեսակետին էր, որ ապստամբությունը նախապատրաստեցին դաշնակցականները՝ իրենց գաղափարախոսությանն ու ծրագրերին ոչ հարիր վարչակարգը տապալելու համար՝ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: Իսկ դաշնակցականները պնդում էին, որ ապստամբությունը համաժողովրդական դժգոհության արդյունքներ էր և սկսվել է տարերայնորեն ու միայն որոշ փուլում է այն դարձել կազմակերպված ու ղեկավարվող շարժում, զինված կռիվ:

Այս ենթազխում փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տրված, որ վերոնշյալ իրար հակասող, երկու տեսակետների միջև է գտնվում ճշմարտությունը: Ավելին, ներկայացված և հիմնավորված է այն, որ քաղաքացիական կռիվներ սկսելու համար շահագրգռված էին կռվող երկու կողմերն էլ, որոնց յուրաքանչյուրն ուներ իր շահերն ու սպասելիքները:

**Երկրորդ ենթազխում՝ «Երևանի գրավումը և բոլշևիկների նահանջը»,** ներկայացված է ապստամբների կողմից փետրվարի 18-ին Երևանի գրավումն ու բոլշևիկների նահանջը:

Փետրվարի 18-ի կեսօրին մայրաքաղաքն արդեն ապստամբների ձեռքում էր: «Դա աննկարագրելի, եզակի, արբեցնող վայրկեան էր,- նշում էր Ս. Վրացյանը,- որ կարելի է զգալ, ապրել, բայց բնավ՝ նկարագրել: Մանավանդ հուզիչ էր այն վայրկեանը, երբ ժողովրդական ցատունի տակ խորտակվեցին բոլշևիկեան արյունոտ բանտի եւ Չեկայի դռները, եւ հազարավոր բանտարկյալներ ազատ դուրս եկան եռագոյն դրոշներով պծնված փողոց, ու նրանց ողջունեց «Մեր Հայրենիքը»: Ավաղ դրանց մեջ չէին Համազասպը, բանվոր Սերգոն, զնդապետ Ղորղանեանը և ուրիշեր»<sup>74</sup>:

Հակախորհրդային ապստամբության լուրը տարածվեց ամենուր: Արձագանքները Հայաստանից դուրս գտնվող հայերի շրջանում տարբեր էին: Դաշնակցության անդամների ու համակիրների մեծ մասի մոտ ապստամբությունը մեծ ոգևորություն էր առաջացրել՝ հույս ներշնչելով, որ հնարավոր է լինելու վերականգնել Հայաստանի պետական անկախությունը:

Ապստամբությունը ողջունեց նաև Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը, իսկ Հնչակյան կուսակցությունը միանշանակ դատապարտեց ապստամբությունը՝ այն որակելով որպես արկածախնդրություն:

Փետրվարյան ապստամբությունը քննադատեց նաև զորավար Անդրանիկը՝ համարելով այն անտեղի<sup>75</sup>:

Փարիզում գտնվող հասարական-քաղաքական գործիչ, գրող Ավ. Ահարոնյանը նամակ ուղարկեց Ավ. Իսահակյանին՝ հետաքրքրվելով թե Վարպետը ինչպիսի կարծիք ունի հաղթանակած ապստամբության մասին: Պատասխան նամակում Իսահակյանը գրեց, թե միթե բավական չէ, որ հայ ժողովուրդը արյուն թափի. «Սիրելիս, խոսք չեմ գտնում ասելու, միայն քեզ հետ ո՛չ համաձայն եմ, ո՛չ հակառակ»<sup>76</sup>:

Պատմաբան Լեոն, անդրադառնալով փետրվարյան ապստամբությանը, նշում է, որ Դաշնակցությունը հայ ժողովրդին տվել էր ամեն ինչ, մնում էր «չարիքների հրեշավորագույնը՝ քաղաքացիական պատերազմը», այդ էլ տվեց<sup>77</sup>:

<sup>74</sup> Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1922, թիվ 2, էջ 55:

<sup>75</sup> Միհրանեան Ա., Ինչպես պետք է գրավել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 16:

<sup>76</sup> «Աւետիք Իսահակեանի նամակները», Գահիրե, 1959, էջ 78:

<sup>77</sup> Տե՛ս Լեոն, Անցյալից, Եր., 2009, էջ 417:

Սմբատը գորավարը, անդրադառնալով Փետրվարյան ապստամբությանը, նշում է. «Հայը հայուն կոտորեց. թուրքերուն դեմ այնքան սրտոտ չէին կռուեր, որքան որ իրարու դեմ գիրար կոտորելու ատեն»<sup>78</sup>:

Իսկ Գարեգին Նժդեհը միանշանակ ողջունեց Փետրվարյան ապստամբությունը. «Սրտի անհուն բերկրանքով ողջունում եմ Արարատեան հայութեան ապստամբութիւնը և ազատագրումը օտար լծից: Ինքնաւար Լեռնահայաստանի ժողովուրդը ջերմ կարոտով սպասում է այն երջանիկ րուպէին, երբ քաղաքական հնարավորութիւն կունենա միանալու իր մայր երկրին»<sup>79</sup>:

**Երրորդ ենթազխում՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի ներքին և արտաքին քաղաքականությունը»**, ներկայացված է փրկության կոմիտեի գործունեությունը փետրվարի 18-ից մինչև ապստամբության պարտությունը:

Հանգամանակից ներկայացած է կոմիտեին նախ ներքին քաղաքականությունը, ընդունած որոշումներն ու օրենքները, արձակած հրամանները: Այնուհետև ներկայացված է նրա արտաքին քաղաքականությունը, իշխանությունը իրենց ձեռքում պահելու ապստամբների անհույս ճիգերն ու բազում անպատասխան ցանակ-դիմումները արտաքին աշխարհին:

Պատմական փաստերի անաչառ վերլուծության միջոցով հանգել ենք այն եզրակացության, որ Հայրենիքի Փրկության կոմիտեի ներքին և արտաքին քաղաքականությունը շատ դեպքերում հակասում էր հայ ժողովուրդի շահերին: Ուղղակի ապշեցուցիչ էր դաշնակցականների գործելակերպը, քանի որ հենց իրենք էին տարիներ շարունակ պայքարում թուրքերի դեմ, ընդամենը ամիսներ առաջ ծանր պարտություն էին կրել նույն այդ թուրքերից և կնքել անպատասխան դաշնագիր: Նրանք ակնհայտ մատնանշում էին, թե հայ բոլշևիկների օգնությամբ էր, որ թուրքերին հաջողվեց գրավել Կարսն ու Ալեքսանդրապոլը, անընդհատ աղաղակում էին, որ թուրքերի նպատակն էր գրավել նաև Արևելյան Հայաստանն ու իրենց միացնել Ադրբեջանը՝ համախալսման կամ ծրագրի համաձայն: Ու այդքանով հանդերձ՝ այժմ իշխանությունը իրենց ձեռքում պահելու համար պատրաստ էին զիջումներ անել իրենց վաղեմի ախոյանին: Բացի այդ՝ միամիտ է մտածել, թե թուրքերին հրավիրելով՝ հնարավոր էր նրանց օգնությամբ երկրից դուրս շարտել բոլշևիկներին:

**ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ**, բաղկացած է չորս ենթազխից:

**Առաջին ենթազխում՝ «Կարմիր բանակի հակահարձակումը»**, ժամանակագրական սկզբունքով լուսաբանված են ռազմական գործողությունների ընթացքը փետրվարի 19-ից մինչև մարտի 20-ը ընկած ժամանակահատվածը, բոլշևիկների նախապատրաստական աշխատանքները և հակահարձակումները:

**Երկրորդ ենթազխում՝ «Ռազմական գործողությունների ընթացքը մարտի 20-ից ապրիլի 1-ը»** ներկայացված է ռազմական գործողությունների ընթացքը, բոլշևիկների ռազմական հաջողությունները, ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի ժամանումը երևան:

**Երրորդ ենթազխում՝ «Երևանի գրավումը բոլշևիկների կողմից»** լուսաբանված է 1921 թ. ապրիլի 2-ին Երևանի գրավումը բոլշևիկների կողմից, ապստամբների գաղթը, ապստամբության պարտությունը և պարտության պատճառները:

<sup>78</sup> Ժամկոչեան Ա., Զօրավար Անդրանիկը կը պատասխանէ իր հակառակորդներուն, էջ 73:

<sup>79</sup> «Ազատ Հայաստան», 9 մարտի, 1921:

Երևանի գրավումով՝ ապրիլի 2-ին, փետրվարյան ապստամբությունը պարտություն կրեց, պարտություն, որն անխուսափելի էր: Ապստամբության համար հեռանկար չէին տեսնում անգամ նրանք, ովքեր կանգնած էին նրա գլուխ: «Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությամբ, իսկ մենք մնանք մենակ,- գրում է Ս. Վրացյանը,- պարտությունը անկասկած է ու անխուսափելի»<sup>80</sup>:

Պատմական փաստերի անաչառ վերլուծության միջոցով հանգել ենք այն եզրակացության, որ Դաշնակցության պարտությունն անխուսափելի էր, քանի որ խորհրդային ուժերի թիկունքում կանգնած էր խորհրդային Կարմիր բանակը, իսկ փոքրաթիվ ապստամբական զորքերը բնականաբար չէին կարող երկար դիմակայել խորհրդային բանակին:

**Չորրորդ ենթագլխում՝ «Փետրվարյան ապստամբության դերը, նշանակությունը և հետևանքները»** պարզաբանված ու մեկնաբանված է ապստամբության ունեցած դասերը, նշանակությունը և հետևանքները հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքում:

Հանգամանակից ներկայացված է ապստամբության ունեցած սթափեցնող ազդեցությունը. թե՛ Մոսկվայում, թե՛ Երևանում բոլշևիկյան իշխանությունները խորհրդային Հայաստանի ոչ կոմունիստ տարրերի նկատմամբ սկսեցին վարել մեղմ քաղաքականություն, դադարեցին բռնագրավումներն ու բռնագավթումները: Ապստամբությունը ստիպեց նրանց առավել զգուշորեն իրականացնել իրենց քաղաքականությունը Հայաստանում:

Այս ենթագլխում փորձ է արվել գնահատելու փետրվարյան ապստամբությունը, որի արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ փետրվարյան ապստամբությունն ունեցել է դրական նշանակություն, և՛ բացասական հետևանքներ:

**ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. Փետրվարյան ապստամբությունը բոլշևիկների հանցավոր քաղաքականության, նրանց վարած բռնաճնշումների և բնակչությանը կողոպտելու հետևանք էր: Փետրվարի 18-ի ծագման մեջ մեղավոր են շատ ավելի բոլշևիկները, քան «մենզ դաշնակները»: Ապստամբությունը «ներմուծված» չէր դրսից, այն, միանշանակ, բոլշևիկների ներքին և արտաքին քաղաքականության արգասիքն ու ծնունդ էր: Նորաստեղծ Հայաստանի խորհրդային իշխանությունը չունեց գործողության ծրագիր և քաղաքականություն, ուստի Հայաստանում մեխանիկորեն կրկնվեց խորհրդային Ռուսաստանի փորձը: Խոսքը, ռազմական կոմունիզմի քաղաքականության մասին է, որը Հայաստանի իշխանությունները գիտակցաբար, թե անգիտակցաբար կիրառեցին երկրում այն ժամանակ, երբ Ռուսաստանում այն արդեն ավարտել էր իր պատմական «առաքելությունը»:

2. 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրով իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո Դաշնակցությունն այն կրկին հետ վերցնելու ցանկություն չի ունեցել, սակայն կուսակցության շարքում եղել են առանձին անհատ գործիչներ, ովքեր խորհրդայնացման առաջին իսկ օրերից սկսել են մտածել խորհրդային իշխանության տապալման մասին: Նրանց թիվը աճել է հունվար-փետրվար ամիսներին՝ Հայիեդկոմի վարած քաղաքականության պատճառով:

3. Փետրվարյան իրադարձություններն սկսվեցին ապստամբությամբ, ապա վերածվեցին քաղաքացիական կռվի, որի բարիկադի երկու կողմերում գտնվող ուժերը պայքարում էին իշխանության համար:

<sup>80</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 656:

4. Անառարկելի է, որ ռուսական կարմիր բանակի շարքերում կռվում էին խորհրդային իշխանությանը հավատարիմ մնացած հայ բոլշևիկները: Միանշանակ, փետրվարյան իրադարձությունները բոլշևիկների ու հակաբոլշևիկների կամ համախորհրդային ուժերի միջև ընթացող պայքար էր: Այլ հարց է, որ խորհրդային իշխանության համար պայքարող հայերի թիվը անհամեմատ ավելի քիչ էր հակախորհրդային ուժերից:

5. Անժխտելի է նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական կռիվներում ռազմական առունձվ վճռական է եղել արտաքին գործոնի՝ ռուսական կարմիր բանակի դերը, որի անմիջական օգնության շնորհիվ միայն հայ բոլշևիկները հասան հաղթանակի: Սակայն չմոռանանք, որ Յայրենիքի Փրկության կոմիտեի կառավարությունը ևս փորձեր է արել ստանալու դոսի մասնավորապես Արևմուտքի, Վրաստանի և նույնիսկ Թուրքիայի օժանդակությունը, սակայն անարդյունք: Գիշտ է, Անգլիային և ԱՄՆ-ին ձեռնառու էին հակախորհրդային իրողությունները, սակայն նրանք գործուն աջակցություն չցուցաբերեցին, իսկ Թուրքիան սոսկ խրախուսեց ապստամբներին, սակայն դրանից այն կողմ չանցավ:

6. Փաստերը վկայում են, որ կռվող երկու կողմերն էլ՝ բոլշևիկներն ու դաշնակցականները, շահագրգռված էին քաղաքացիական կռիվները հրահրելու մեջ: Դաշնակցականները ցանկանում էին վերջ դնել բոլշևիկների կործանարար քաղաքականությանը, բանտերից ազատել իրենց ձերբակալված ընկերներին, կանխել նրանց գնդակահարությունն ու մահը: Իսկ բոլշևիկներին քաղաքացիական կռիվներն անհրաժեշտ էին նախկին ուժերին արմատախիլ անելու և, որ ամենակարևորն է, աշխարհին՝ նամանավանդ, թուրքերին ապացուցելու, որ Յայաստանում տեղի ունեցածը զուտ կառավարության փոփոխությունն է:

7. Յայրենիքի Փրկության կոմիտեի ներքին և արտաքին քաղաքականությունը շատ դեպքերում հակասում էր հայ ժողովրդի շահերին: Ուղղակի ապշեցուցիչ էր դաշնակցականների գործելակերպը, քանի որ հենց իրենք էին տարիներ շարունակ պայքարում թուրքերի դեմ, ընդամենը ամիսներ առաջ ծանր պարտություն էին կրել նույն այդ թուրքերից և կնքել աննպաստ դաշնագիր: Նրանք ակնհայտ մատնանշում էին, թե հայ բոլշևիկների օգնությամբ էր, որ թուրքերին հաջողվեց գրավել Կարսն ու Ալեքսանդրապոլը, անընդհատ աղաղակում էին, որ թուրքերի նպատակն էր գրավել նաև Արևելյան Յայաստանն ու իրենց միացնել Ադրբեջանը՝ համախլամական ծրագրի համաձայն: Ու այդքանով հանդերձ՝ իշխանությունը իրենց ձեռքում պահելու համար պատրաստ էին զիջումներ անել իրենց վաղեմի ախոյանին:

8. Ապստամբությունն ունեցել է ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Նախ՝ ապստամբության շնորհիվ բանտերից ազատվեցին պետական, հասարակական, քաղաքական, մտավորական գործիչներ, մարտական առաջնորդներ, ուսանողներ, որոնք փրկվեցին վերահաս մահից: Փետրվարյան ապստամբությունը նպաստեց, որ խորհրդային իշխանությունները ձեռնամուխ լինեն հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և նրանց Յայաստան վերադարձնելու գործին: Եվ շուտով իշխանությունների ձեռնարկած քայլերը տվեցին իրենց արդյունքները. արդեն մայիսին ազատ արձակվեց ու աքսորից Յայաստան վերադարձավ սպաների մեծ մասը: Ապստամբության շնորհիվ հայությունը փրկվեց Յայիեղկոմի կողմից իրականացվող կործանարար քաղաքականությունից: Ինչպես Մոսկվայում, այնպես էլ՝ Երևանում խորհրդային իշխանությունները դաս առան, խորհրդային Յայաստանի ոչ կոմունիստ տարրերի նկատմամբ սկսեցին վարել հանդուրժողական քաղաքականություն, դադարեցին բռնագրավումները, մտավորականության նկատմամբ բացահայտ անվստահությունը փոխարինվեց

սիրաշահումով և հոգատարությամբ: Փաստորեն, փետրվարյան ապստամբությունը սթափեցնող ազդեցություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց նրանց առավել զգուշորեն իրականացնել իրենց քաղաքականությունը Հայաստանում: Ի վերջո, դրական նշանակություններից մեկը նաև այն էր, որ խորհրդային իշխանության վերահաստատումից հետո քայլեր ձեռնարկվեցին Հայաստանում գտնվող ռուսական զորամասերի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ մեղմելու համար:

9. Դրական նշանակության հետ մեկտեղ ապստամբությունն ունեցել է նաև բացասական հետևանքներ: Կռիվների պատճառով առանց այն էլ ծայրահեղորեն քայքայված երկրում եղան մոր ավերածություններ ու թալան, եղան մարդկային բազում զոհեր: Երկրից հեռացավ բնակչության սերուցքը՝ մտավորականությունը՝ իր հետ տանելով կուտակված գիտելիքների մեծ պաշար, որը անշուշտ, բավականին անհրաժեշտ էր Հայաստանին: Բացասական կողմերից մեկն էլ այն էր, որ ապստամբները, Հայաստանից գաղթելով, տարան Հայաստանի պետական գանձերը՝ ավելի բարդացնելով սովյալ բնակչության վիճակը: Բացի դրանից պետական գանձերի հետ նրանք տարել էին Հայաստանի արխիվի մի մասը և թանկարժեք ու ոսկյա իրեր, որոնք ոչ միայն նյութական, այլև նաև մշակութային արժեք էին: Դաշնակցությունը հետագայում որքան էլ փորձեց արդարացնել իրենց այս քայլը, այնուամենայնիվ, նրանք իրավունք չունեին այդպես վարվելու, քանի որ Հայաստանում ապստամբության ջախջախումից հետո ավելի շատ հայ էր մնում, քան գաղթում: Դեպի Ջանգեզուր հեռացող գաղթականները քայքայում առաջացրին Սյունիքի պաշտպանների շարքում:

10. Փաստերը վկայում են, որ Մոսկվայի պայմանագրի կաշկանդիչ պայմանների պատճառը ոչ փետրվարյան ապստամբությունն է, ոչ էլ ՀՓԿ-ի՝ Մոսկվա ուղարկված հայտնի հեռագիրը: Մոսկվայի պայմանագրի կաշկանդիչ պայմանները պայմանավորված էին ոչ թե փետրվարյան ապստամբությամբ ու Ս. Վրացյանի դիմում-հեռագրով, այլ Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումներով ու շահերով:

11. Փետրվարյան ապստամբության ամենակարևոր դասը թերևս այն է, որ երբ բռնություններն ու անօրինականությունները, թալանն ու ավերածությունները անցնում են բոլոր թուլատրելի ու անթույլատրելի սահմանները՝ լցնելով ժողովրդի համբերության բաժակը, ժողովուրդը ոտքի է կանգնում՝ ընդդեմ իր ներքին և արտաքին հարստահարողների:

12. Որքան էլ նշանակալից լինի փետրվարի 18-ի շարժման արդյունքը, որքան էլ անխուսափելի լինի այդ շարժումը, այսուհանդերձ, այն մեր երկիրը մատնեց եղբայրասպան կռիվների: Եթե դեկտեմբերից իշխեր ավելի խելացի ու հեռատես քաղաքականություն, փետրվարյան ապստամբությունը տեղի չէր ունենա, և Հայաստանը զերծ կմնար խոշոր ցնցումից:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1. Գրիգորյան Ն. Ս., Հայաստանը հեղկոմի գործունեության առաջին ամիսներին (1920 թ. դեկտեմբեր-1921 թ. փետրվար), «Ակունք», Երևան, ԵՊՀ հրատ., 2011, թիվ 3, էջ 28-37:
2. Գրիգորյան Ն. Ս., «Հայրենիքի փրկության կոմիտեի» ներքին և արտաքին քաղաքականությունը, «Ակունք», Երևան, ԵՊՀ հրատ., 2012, թիվ 3 (6), էջ 21-32:
3. Գրիգորյան Ն. Ս., 1921 թ. փետրվարյան ապստամբության գնահատության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակագիտական գիտություններ», թիվ 139.1, Երևան, 2013, էջ 48-63:
4. Գրիգորյան Ն. Ս., Փետրվարյան ապստամբության դերն ու նշանակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակագիտական գիտություններ», թիվ 140.6, Երևան, 2013, էջ 68-81:

ГРИГОРЯН НАТЕЛЛА СЕРЕЖЕВНА

## ФЕВРАЛЬСКОЕ ВОССТАНИЕ 1921-ОГО ГОДА В АРМЕНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук,  
специальность 07.00.01 "История Армении"

Защита состоится 23-го сентября 2014 г., в 14<sup>00</sup> на заседании  
специализированного совета по Истории Армении 004 ВАК РА, при Институте  
истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

### Р Е З Ю М Е

Диссертация посвящена одному из важнейших событий в истории Армении 20-ого века - февральскому восстанию 1921-ого года. Несмотря на наличие богатой политической, публицистической и научной литературы, до сих пор нет исчерпывающего завершеного исследования, охватывающего различные вопросы этого события, а имеющиеся данные часто противоречивы. И это понятно, так как восстание являясь рождением деятельности двух враждующих политических партий, соответственно воспринималось и интерпретировалось с двух противоположных точек зрения. Иными словами, противоборство оружия превратилось в противоборство пера и реальный поединок сменился историко-идеологическим. Силы, находящиеся по разные стороны баррикад, были отдалены территориально-дашнакская партия находилась в эмиграции, а коммунистическая партия единовластно правила внутри страны. Их идеологическая перестрелка стала походить на пустой выстрел, они не пытались услышать друг друга, изменить свою позицию или найти компромиссное решение. Сейчас, когда нет идеологического единовластия коммунистической партии, а дашнакская партия свободно действует на территории независимой Республики Армения, пришло время пересмотреть имеющиеся в армянской историографии противоречивые позиции и путем их критического анализа сформировать правильное научно-историческое представление об этой странице истории армянского народа, что и явилось основной целью нашего исследования. Перед нами была поставлена задача провести систематизированный и объективный анализ фактов, событий, деятельности отдельных лиц, касающихся февральского восстания, на основе существующих архивных материалов, научной литературы и данных прессы.

Сегодня чрезвычайно важны объективный анализ и научная оценка исторических событий, связанных с февральским восстанием, как с научно-исторической, так и практической и политической точки зрения. Исследование имеет большое значение в плане изучения уроков указанных событий и формирования соответствующих выводов. В работе была использована методология сравнительно-исторического исследования, проведено тщательное изучение документов, архивных материалов, выявлены причинно-следственные связи. Отсутствует предвзятый партийный подход, выводы



сделаны на основе фактических материалов, часть которых впервые исследовалась с научной точки зрения.

В процессе работы над диссертацией были использованы соответствующие фонды национального архива Армении, печатные первоисточники, сборники приказов, тексты, телеграмм, писем, статьи и выступления действующих лиц и непосредственных участников этих событий, государственных и партийных деятелей Советской Армении и России. Данная диссертационная работа является первой научной попыткой всестороннего критического анализа многочисленных противоречивых архивных документов, касающихся февральского восстания 1921-ого года.

Диссертация состоит из введения, трех глав и списка использованной литературы.

Во введении представлены актуальность темы, цель исследования, степень изученности темы, аналитический обзор документальных источников и литературных данных.

Первая глава посвящена истории становления советской власти в Армении и деятельности Ревкома, создавших предпосылки февральского антосоветского восстания.

В второй главе представлены подготовка и начало февральского восстания, захват Еревана дашнаками, деятельность "Комитета спасения родины".

В третьей главе освещены причины порожения февральского восстания, его роль, значение и последствия для общественно-политической и экономической жизни Армении.

В заключении обобщены основные результаты исследования истории февральского восстания 1921-ого года.

Диссертация имеет научно-прикладное значение. Выводы и заключения работы, как и представленные документы, могут быть использованы при написании учебников и работ по истории армянского народа новейшего периода.

**Grigoryan Natella S.**

**February Rebellion of 1921 in Armenia**

**Dissertation for the degree of Doctor of History on the specialization  
of "History of Armenia" (07.00.01)**

The defence of the dissertation will be held on the 23<sup>th</sup> of September, 2014, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of RA NAS (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

**Summary**

The dissertation is devoted to the study of the February Rebellion of 1921-one of the important events in the 20<sup>th</sup> century history of Armenia. The question has so far been extensively discussed in literature from political, rhetorical and scientific viewpoints. However, there are aspects deserving more attention, as they are controversial and require a much thorough and detailed examination.

The controversy of opinions can be accounted for by the fact that different representatives of the two hostile parties-the Communist party and the ARF, as well as those holding the same views interpreted the February Rebellion of 1921 from diametrically opposed points of view. In other words, the counteraction of the two parties now moved from the actual field of battle to the field of ideological battle, although to fight the battle was not very easy with the ARF being sentenced to banishment, while the communist party was enjoying a privileged monopoly within the country.

Today, when the Communist party has failed its hegemony in the country and the ARF acts freely in our Independent Republic of Armenia, it is high time to reconsider the contradictory statements in Armenian historiography and by applying the method of critical analysis reformulate our understanding and interpretation of the important historical event of the February Rebellion.

This being the goal of our research, we have been very scrupulous in collecting material for our analytical study: archival documents, a large amount of investigative literature, press, etc.The thorough analysis of the material has availed us of the opportunity to study all the details concerning the event and the actual participantsinvolvedin the activities and achieve results which reflect our impartial disposition.

The unbiased attitude to the analysis and really scientific evaluation of the February Rebellion of 1921 is of paramount importance not only from a historiographic, but also practical-political point of view, for the study of the issue can teach us a lesson of politics in a sense and help us understand our historical mistakes.

From a methodological standpoint we have been guided by the principle of minute investigation of factual sources, documentary material, as well as application of the methods of critical and comparative historiography.

The conclusions of the research have been based on documentary material put into scientific circulation for the first time. In the process of the research a variety of sources have been used: appropriate funds of the Armenian National Archive, different printed sources, orders and decrees promulgated by Armenian and Russian statesmen and party leaders, letters and telegrams of immediate activists of the event, reports and speeches, as well as publications of the soviet and post-soviet periods, as well as by representatives of the Armenian Diaspora.

The present research is in fact the first attempt to take into minute consideration all the possible aspects of the event under study and present a possibly complete picture of the February Rebellion which took place in rather a complicated period of our country – the beginning of the 20<sup>th</sup> century.

The paper consists of an introductory part, three chapters, a conclusion and a bibliography. The introduction presents the theoretical background of our study, the vitality of the issue, the novelty of the work, the theoretical and practical value of the investigation carried out, the global aim of the research and the concrete tasks we fulfilled.

The first chapter entitled “Preconditions and Motivations of February Rebellion” consists of two subchapters: 1. “The establishment of Soviet Regime in Armenia”, 2. “First Months of the Armenian Revolutionary Committee”. In this chapter the establishment of the Soviet Regime in Armenia, as well as the reaction and operations of the Revolutionary Committee at the initial stage are being discussed. The research shows that the operations of the Revolutionary Committee prompted the creation of certain preconditions and motivations for an anti-soviet rebellion – namely the February Rebellion of 1921.

The second chapter entitled “Process of February Rebellion” consists of three subchapters: 1. “Beginning of February Rebellion”, 2. “Takeover of Yerevan and the Retreat of the Bolsheviks”, 3. Domestic and Foreign Policy of the Committee of Homeland Salvation”. The questions raised in the second chapter have been carefully studied from different angles taking into consideration all the facts revealed by the overall study of a lot of archival documents.

The third chapter entitled “The Defeat of February Rebellion” consists of four subchapters: 1. “The Counterattack of the Red Army”, 2. “The Process of Civil Fights from March 20 to April 1”, 3. Takeover of Yerevan by Bolsheviks”, 4. “The Role, Significance and Consequences of February Rebellion”. In this chapter the reasons for the defeat of February Rebellion are thoroughly discussed and highlighted. We have also brought out the important role and the consequences of the event in the social-political and economic life of Armenia.

The results of the research have been summed up in the conclusive part of the work.

The applicability of the results to the study of different historical questions concerning the same historical period of Armenia cannot be overestimated. The theoretically important and practically valuable findings of the research can be used in textbooks and special courses on the History of Armenia.